

Հանարը թիվ 3

Տիպը Պաշտոնական

տեղեկատվություն

Սկզբնաղբյուրը ՀՀԳՏ 2009.08.15/24(342)

Ընդունող մարմինը Արդարադատության

նախարարություն

Ստորագրող մարմինը Արդարադատության

նախարարության իրավական

ակտերի փորձաքննության

վարչության պետ

Վավերացնող մարմինը

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 03.08.2009

Տեսակը Մայր

Կարգավիճակը Գործում է

Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 03.08.2009

Ստորագրման ամսաթիվը 03.08.2009

Վավերացման ամսաթիվը

Ուժը կորցնելու ամսաթիվը

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 3 ՕԳՈՍՏՈՍԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 3 ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

3 օգոստոսի 2009 թ.

թիվ 3

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 22-Ի ԹԻՎ 140-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 115-Ն ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԻ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ և 91-րդ հոդվածի 5-րդ մասերի պահանջներից ելնելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը **հայտնում է, որ՝**

Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրի 2009 թվականի հուլիսի 15-ի թիվ 22 (340) համարում հրապարակված 2009 թվականի մայիսի 5-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 22-ի թիվ 140-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 115-Ն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը՝ հուլիսի 26-ից, թեև որոշման ուժի մեջ մտնելու ժամկետ է նշված 2009 թվականի հուլիսի 1-ը, քանի որ այն իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքները կամ ազատությունները սահմանափակող կամ պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող կամ պարտականություններ սահմանող նորմեր է պարունակում:

Իրավական ակտերի
փորձաքննության վարչության պետ՝

Կ. Խտրյան